Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2024թ. հուլիսի 22-ից օգոստոսի 7-ը քաղաք Հանչժոու (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Նելլի Խառատյան - ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության դասակարգման և մաքսասակագնային հարցերով մասնագիտական կենտրոն-բաժնի պետի տեղակալ

Աննա Վարդանյան - ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային առևտրի և օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչության մաքսային գործառնությունների սպասարկման բաժնի 1-ին բաժանմունքի գլխավոր մաքսային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք. Հանչժոու, հուլիսի 22-ից օգոստոսի 7-ը

3. Հրավիրող կողմը՝

Դասընթացը ֆինանսավորվել է ՉԺՀ Առևտրի նախարարության կողմից («Ministry of Commerce (MOFCOM)») և կազմակերպվել է Չինաստանի Բամբուկի Ազգային կենտրոնի (China National Bamboo Research Center (CBRC)), Չինաստանի ՍԻԹԵՍ-ի կառավարման մարմնի (CITES Management Authority of China (CCMA)) ու Անտառների և խոտածածկ տարածքների ազգային վարչության (The National Forestry and Grassland Administration (NFGA) կողմից:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Աշխարհը շարժվում է «Կանաչ» մաքսատուն գաղափարի ճանապարհով, ուստի ՀՀ-ի համար խիստ կարևոր է ինտեգրվել, և հնարավորինս պետք է տիրապետել այդ շրջանակներում առկա տեղեկատվությանը: ՍԻԹԵՍ կոնվենցիան այդ կոնտեքստում խիստ կարևոր բաղադրիչ է: Աշխարհում անօրինական առևտրի 4-րդ ամենախոշոր ուղղությունը վայրի և անհետացման եզրին գտնվող կենդանիների և բույսերի ու դրանցից պատրաստված արտադրատեսակների առևտուրն է: Այսպիսով, թերիմացությունը շատ լուրջ վտանգ կներկայացնի մաքսանենգության զսպման տեսանկյունից, ինչպես նաև՝ չի բացառվում մեծ մասշտաբի մաքսային խախտումների թույլատրման հավանականությունը: Ուստի մաքսային մարմինների տեսանկյունից խիստ գնահատելի է սեմինարի շրջանակներում ստացված տեղեկատվությունը: Բացի այդ, այս

ոլորտում խիստ արդիական է փորձի փոխանակումը: Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ-ն ևս անդամակցում է ՍԻԹԵՍ կոնվենցիային և հետևաբար կրում է նաև որոշակի պարտավորություններ, խիստ կարևոր է ունենալ հստակ և արդիական տեղեկատվություն այդ շրջանակներում, ինչն էլ կնպաստի պարտավորությունների հավուր պատշաճի կատարմանը:

5. Քննարկված թեմաները՝

Ս. թ. հուլիսի 23-ից օգոստոսի 5-ը կայացած «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» դասընթացի ժամանակ քննարկվել են հետևյալ թեմաները.

- Ինչ է իրենից ներկայացնում ՍԻԹԵՍ-ը և ինչպիսի պարտավորություններ է սահմանում
- ՍԻԹԵՍ-ի կիրառման առանձնահատկությունները
- Որոնք են կոնվենցիայի օբյեկտները
- Ովքեր են կոնվենցիայի սուբյեկտները
- Կենդանիների և բույսերի պաշտպանությանն առնչվող մի շարք հարցեր
- Վարչական վարույթները խնդիրների պարագայում և պատասխանատվության միջոցները
- Անօրինական առևտուր և դրա դեմ պայքար
- Առգրավման կարգ
- Տեղայնացված փորձի փոխանակում, համագործակցության հնարավոր ուղիներ և առկա մարտահրավերներ՝ գործուն լուծումների մշակման, նոր և նորարարական մոտեցումների վերհանման նպատակով:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացին բացի ՀՀ-ից, մասնակցել են նաև Բանգլադեշի, Իրանի, Լաոսի, Կամբոջայի, Հորդանանի, Նեպալի քաղաքականության և վարչարարության համար պատասխանատու անձինք՝ շուրջ 40 հոգի: Միջոցառման շրջանակում կազմակերպված քննարկումների և լսարանային ու արտալսարանային դասընթացների ընթացքում մասնակիցները քննարկել են ՍԻԹԵՍ կոնվենցիայի շրջանակներում արդիական մի շարք խնդիրներ: Լայնամասշտաբ քննարկվել է անօրինական առևտուրը, դրա բացահայտումը և զսպող մեխանիզմները, անհետացման եզրին գտնվող կենդանիների և բույսերի պաշտպանությանն առնչվող հարցեր, դրանց քանակական աճին նպաստող ուղիները: Ներկայացվել է կոնվենցիայի մասին տեղեկացվածության և կրթվածության բարձրացմանն առնչվող դրույթներ: Անդրադարձ է կատարվել մարդ-կենդանի բախմանը: Քննարկվել է նաև Չինաստանի կողմից որդեգրված աղքատության հաղթահարման ուղիներից մեկը՝ բամբուկը որպես տնտեսության զարգացման

գրավական և «կանաչ» կոնցեպտի կրող՝ որպես պլաստմասին փոխարինող արտադրատեսակ: Որպես դասընթացավար, նյութը ներկայացրել են ոլորտում իրենց անմիջական դերն ունեցող պաշտոնյաներ և դասախոսներ:

Եզրափակող ելույթներով հանդես են եկել Չինաստանի Բամբուկի Ազգային կենտրոնի, Չինաստանի ՍԻԹԵՍ-ի կառավարման մարմնի ու Անտառների և խոտածածկ տարածքների ազգային վարչության ներկայացուցիչներ, Հորդանանի բնության պահպանության թագավորական միության (The Royal Society for the Conservation of Nature of Jordan) վայրի բնության պահպանության բաժնի ղեկավարը:

Այցելել ենք Շանհայի ՍԻԹԵՍ-ի կառավարման մարմնի գրասենյակ, որի ղեկավարը տեղում ծանոթացրել է աշխատանքի կազմակերպմանը և մեխանիզմներին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել: Ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություն. հետագայում, դասընթացի շրջանակներում արծարծված թեմաների վերաբերյալ ընթացիկ ծագող հարցերին, հնարավորության սահմաններում, տալ պարզաբանում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մեր կողմից բարձր է գնահատվել և գնահատվում միջազգային տարբեր հարթակներում գործընկեր երկրների մասնագիտական կառույցների հետ ոլորտային քննարկումների անցկացումը, վարչարարության ոլորտում արդիական և նորարական մեխանիզմների ներդրման համատեքստում առկա հնարավորությունները, առկա գործող մեխանիզմների դիտարկման և դրանց առավելություններն ու թերությունները վերլուծելու հնարավորությունը, ինչպես նաև միջազգային մակարդակով կիրառվող վարչարարական մեխանիզմները:

Միջոցառմանը մասնակցելը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցիչներին ավելի համընդգրկուն պատկերացում կազմել դասընթացի շրջանակներում արծարծված թեմաների վերաբերյալ, դիտարկել աշխատանքի մեկ այլ մոդել՝ գնահատելով դրա դրական և բացասական կողմերը և ինչու ոչ, հնարավորության սահմաններում փորձել ներկայացնել առաջարկներ, որոնք հնարավորություն կտան բարձրացնել ՀՀ ՊԵԿ-ի և շահառու հանդիսացող այլ անձանց կողմից կատարվող համապատասխան աշխատանքների որակը, նույնականացնել լավագույն միջազգային փորձը՝ ՀՀ-ում ներդնելու նպատակով: Սա իր դրական ազդեցությունը կունենա

շահառու բոլոր կողմերի համար՝ ՀՀ ՊԵԿ, լիազոր համակարգող մարմին, տնտեսվարողներ: Բացի այդ սա հնարավորություն էր ներկայացնել և ավելի ճանաչելի դարձնել Հայաստանի Հանրապետությունը, մեր փորձը, ինչպես նաև՝ հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և գիտական ոլորտի ներկայացուցիների հետ:

- Հիմքում ունենալով այսօրվա դրությամբ արդեն հաջողությամբ գործարկված «Թույլատվական փաստաթղթեր» հարթակը և Չինաստանի փորձը՝ առաջարկում ենք ՍԻԹԵՍԻ շրջանակներում տրամադրվող փաստաթղթերը ևս տեղափոխել այդ հարթակ (Չինաստանում ներմուծման դեպքում արդեն իսկ գործում է բացառապես էլեկտրոնային համակարգ, իսկ արտահանումների դեպքում տրամադրվում է թղթային տարբերակով՝ հաշվի առնելով միջազգային առևտրի կանոններն ու կոնվենցիայի դրույթները): Սա հնարավորություն կտա գործընթացը կազմակերպել ավելի թափանցիկ, հաշվետվողական, օպտիմալ՝ հեշտացված և պարզեցված կարգով՝ հաղթահարելով ժամանակային և տարածական խոչընդոտները:
- Չինաստանում լիազոր մարմինը վարում է ՍԻԹԵՍ թույտվության հստակ համարակալված արխիվ իր բոլոր հիմնավորող փաստաթղթերով: Ամեն ինչ խիստ կանոնակարգված էր: Գտնում եմ նման մոտեցումը ողջունելի է: Սա հնարավորություն է տալիս ավելի հաշվետվողական լինել և հեշտությամբ, ըստ անհրաժեշտության, վերհանել անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը:
- Լրացուցիչ ուշադրություն է անհրաժեշտ դարձնել ՍԻԹԵՍ կոնվենցիայով ցուցակագրված տեսակներից պատրաստված արտադրանքներին: Դրանք ամենաբարդ հսկվող արտադրատեսակներն են: Որպես օրինակ մեզ ներկայացվեց «Dior» կազմակերպության կողմից ներկայացված թույլտվություն, քանի որ պայուսակը կարված էր վտանգված տեսակ համարվող կոկորդիլոսի կաշվից: Ուստի գտնում ենք, որ հայտարարագրման և սահմանահատման փուլում անհրաժեշտ է լրացուցիչ ուշադրության դարձնել այդ հանգամանքին՝ առնվազն պահանջելով, որ, օրինակ, բնական կաշվից արտադրատեսակ հայտարարագրելու դեպքում նշվի նաև թե ինչ կենդանու մորթուց է այն պատրաստված: Դասընթացի ժամանակ նշվեց, որ հաշվի առնելով նեղ մասնագիտական գիտելիքների անհրաժեշտությունը և սղությունը, երբեմն մաքսային մարմինների համար խիստ բարդ է բացահայտել նման արտադրատեսակները: Այդ իսկ նպատակով պետությունը համագործակցում է հավատարմագրված փորձագիտական լաբարատորիաների հետ: Դրանք մասնավոր կազմակերպություններ են, սակայն պետության կողմից հավատարմագրված են: Այսպիսով, այն դեպքերում, երբ մաքսային մարմնի

աշխատակիցը կասկած է ունենում նմանատիպ ապրանքերի առնչությամբ, ապա կապ է հաստատում այդ փորձագետների հետ և ստանում անհրաժեշտ մասնագիտական աջակցություն:

- Գտնում եմ, որ առանցքային է մաքսային համակարգում այս կոնվենցիայի իմացության մակարդակի բարձրացումը, ուստի հաշվի առնելով դասընթացին մասնակցությունս և ՀՄԿ օնլայն «Click» հարթակի միջոցով նույն թեմայի շրջանակներում դասընթացի մասնակցությունս, ինչպես նաև դասընթացավարի փորձս, ես՝ Նելլի Խառատյանս, պատրաստակամ եմ որպես դասընթացավար ներգրավվել գործընթացում և փոխանցել ստացած գիտելիքներս համակարգի այլ աշխատակիցներին: Առանձնակի կարևոր է այդ գիտելիքների փոխանցումը Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչությանը՝ սահմանային հսկողություն իրականացնելու տեսանկյունից, Արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչությանը՝ փաստաթղթային հսկողություն իրականացնելու և ոչ սակագնային հարցերի շրջանակներում մասնագիտական աջակցություն ցուցաբերելու տեսանկյունից, Հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչությանը՝ բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության կոնտեքստում և Մաքսանենգության դեմ պայքարի վարչությանը՝ հաշվի առնելով, որ աշխարհում անօրինական առևտրի 4-րդ ամենախոշոր ուղղությունը վայրի և անհետացման եզրին գտնվող կենդանիների և բույսերի ու դրանցից պատրաստված արտադրատեսակների առևտուրն է: Չինաստանում կոնվենցիան չափացանզ կարևորում են և այդ շրջանակներում իմացության մակարդակի բարձրացման համար ջանքեր չեն խնայում. մինչև իսկ միջազգային մակարդակով:
- Կարևոր է նաև կոնվենցիայի հնարավոր շահառուներին կրթելը: Օրինակ՝ չինական փորձառության շրջանակներում խիստ կարևորում էին սահմանային անցման կետերում կրթական բնույթ կրող նյութերի, լուսանկարների և նմուշների տեղադրումը, ինչը հնարավորություն է տալիս սահմանահատողին նախապես հստակ պատկերացում կազմել, թե որ ապրանքների տեղափոխումն է արգելված, որոնք են իրականացվում թույլտվության առկայության պարագայում և առհասարակ, սա բարձրացնում է իմացության և գիտակցվածության աստիճանը քաղաքացիների շրջանակներում և հնարավորություն է տալիս խուսափել օրինազանց գործողությունների կատարումից:
- Գտնում ենք, որ անհրաժեշտ է միջազգային մակարդակով նախաձեռնել միջոցառում, որի շրջանակներում կստեղծվի մի հարթակ, որը հնարավորություն կտա մաքսային մարմնի աշխատակիցներին ծանոթանալ միջազգային մակարդակով երկրների կողմից բացահայտված բոլոր տեսակի կեղծված կամ անօրինական ՍԻԹԵՍ թույլտվությունների: Այս գործում փորձը իր

մեծ դերը ունի, ուստի միջազգային մակարդակով փորձի փոխանակումը հնարավորություն կտա լինել ավելի աչալուրջ և զգոն՝ խուսափելով հնարավոր զեղծարարությունների թակարդում հայտնվելուց:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Նելլի Խառատյան

Աննա Վարդանյան

12.08.2024թ